# 4 Ինչպե՞ս երթամ պարապ ձեռքով,

1. Ինչպե՞ս երթամ պարապ ձեռքով,
Տեսնեմ Փրկչիս, ո՜հ, այսպես,
Չունեմ, ո՜հ, ես Իրեն տալու
Պտուղ օրհնյալ՝ իմ կյանքես:

Ինչպե՞ս երթամ պարապ ձեռքով,
Տեսնեմ Փրկչիս, ո՜հ, այսպես,
Ինչպե՞ս կրնամ ես համարձակ
Դիմավորել զԻնքն այդպես:

2. Ո՜հ, դուք՝ սուրբեր, քաջությունով
Ասպարեզ ելեք գործի,
Գործեցեք, քանի որ լույս կա,
Զի մահն է շատ մոտ մեզի:

3. Մահն ինձ երկյուղ չազդեր երբեք,
Զի Փրկիչս է զիս փրկած,
Բայց, ո՜հ, ի՜նչպես կրնամ սիրով
Փարիլ Անոր գրկաբաց:

Այժմ կերթամ առատ ձեռքով,
Տեսնեմ Փրկչիս, ո՜հ, այսպես:
Այժմ կրնամ ես համարձակ
Դիմավորել զԻնքն այդպես: